

ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՆՑՔՆԵՐԻ ԲԱԽՈՒՄԸ*

Բանալի բառեր – քաղաքակրթական դեմք, «ձիով քայլ», հակաչինական այլանս, արիական միջանցք, եվրասիական նախագիծ, «ճանապարհացիդ», ազգային միասնություն, ժողովրդային շարժում, քաղաքակրթական ընտրություն:

Նախորդ **Խմբագրականում** արդեն արձանագրել ենք, որ մեր անկախության 30-ամյակի¹ տարում Հայաստանում ծավալվող անպտուղ ներքաղաքական դիսկուրսը հետխորհրդային պետաքաղաքական իրողությունների փլուզման վկայությունն է:

Ներկայումս հետխորհրդային ողջ տարածքում ու մանավանդ Ռուսաստանում ընթացող նույնատիպ զարգացումներն ակնհայտ են դարձնում նաև, որ հետխորհրդային երկրները թևակոխել են իրենց **քաղաքակրթական դեմքի** հստակեցման փուլը: Քանզի երբ նախկին ԽՍՀՄ-ի եվրոպական-քրիստոնեական արբանյակները հեռանում են դեպի Արևմուտք, իսկ թյուրք-իսլամականները հիմնում են «Թյուրքալեզու պետությունների կազմակերպությունը», Ռուսաստանն ինքը նույնպես հայտնվում է քաղաքակրթական ընտրության հրամայականի առաջ:

Բայց երբ նրա ղեկավարությունը ստմտում էր գոնե Բելառուսին ու Հայաստանին «նոր միութենական պետության» մեջ ներգրավելու մասին, Ռուսաստանում 2021 թ. սեպտեմբերի 17-19-ին տեղի ունեցած խորհրդարանական ընտրություններից հետո պարզվեց, որ ռուս հասարակության արագացող արևմտականացման խորապատկերին Եվրասիա մայրցամաքում սկիզբ են առել լրջագույն տեղաշարժեր: Նման պայմաններում հետխորհրդային ողջ տարածքի, այդ թվում՝ Ռուսաստանի ապագան կախման մեջ է հայտնվել ոչ թե հնացած ինտեգրացիոն սխեմաներից, այլ գլոբալ մակարդակում արձանագրվող հիմնարար փոփոխություններից: Որովհետև ԱՄՆ-ի՝ Աֆղանստանից հեռանալու «**ձիով քայլ**» հետևանքով Թուրքիայի արևելյան, Պակիստանի հյուսիսային ու մանավանդ Չինաստանի արևմտյան ախորժակների կտրուկ մեծացման պայմաններում Ռուսաստանը մենակ է մնացել Եվրասիայի միջուկն **աֆղանացնելու** ամերիկյան նպատակադրմանը հանդիման: Ուստի, իր կամքից անկախ, Կենտրոնական Ասիայում Մոսկվան դարձել է տարածաշրջանի քաղաքակիրթ դեմքի պահպանման երաշխավորը: Մյուս կողմից էլ՝ խաղաղօվկիանոսյան

Վէմ համահայկական հանդես, ԺԳ (ԺԹ) ցրտի, թիվ 3(75), հուլիս-սեպտեմբեր, 2021

* Ընդունվել է տպագրության 21.09.2021:
1 Տե՛ս ՀՀ անկախության 30-ամյակին ընդառաջ, «Վէմ», Եր., 2021, N 2, էջ 3-7:

տարածաշրջանում ԱՄՆ-ի ու Մեծ Բրիտանիայի՝ Ավստրալիայի հետ միասին ձեռնարկած երկրորդ «ձիով քայլի» հետևանքով անգլոսաքսերի կողմից ստեղծվող «AUKUS» ռազմաքաղաքական դաշինքը Ֆրանսիային ու ողջ Եվրամիությանն է թողել խաղից դուրս վիճակում: Այս ակնհայտորեն հակաչինական այլանսի ստեղծումով գլոբալ քաղաքական զարգացումների կենտրոնը տեղափոխվում է ասիական-խաղաղօվկիանոսյան տարածաշրջան՝ Եվրամիությունում որոշակի հետաքրքրություն առաջացնելով Ռուսաստանի հանդեպ: **Գլոբալ տնտեսության ու քաղաքականության մեջ վերջին տարիներին եղանակ ստեղծող ամերիկա-չինական լատենտ մրցակցության՝ բացահայտ դիմակայության վերածվելու իրողությունը համաշխարհային-պատմական նշանակություն ունեցող վերադասավորումների այն հիմնական հանգույցն է, որի հաջորդական օղակները խորքային հեղաբեկումներ են առաջ բերում Եվրասիայի ողջ տարածքում:**

Նախ և առաջ սա ենթադրում է հակակշիռների մի ամբողջ համակարգի ձևավորում Հարավային Ասիայում՝ Հնդկաստանի գլխավորությամբ, և այդ հսկա երկրի դերակատարության զգալի մեծացում ողջ Եվրասիայում: Մայրցամաքային Եվրոպայի «անկյունագծի աշխարհաքաղաքականության» **Վելլինգտոն-Ռեյկյավիկ** գիծը Հնդկաստան-Իրան-Հայաստան-Վրաստան-Եվրոպա միջանցքով պսակելու մտադրությունը դրա կարևոր բաղկացուցիչն է: Այդ նպատակով Եվրամիության խոստացած բազմամիլիարդանոց ներդրումներն իրենց թիկունքում ունեն ԱՄՆ-ի աջակցությունը: Հենց դրա համար են ամերիկյան դիվանագետները պարբերաբար այցելում Սյունիքի մարզ, քանզի այդտեղով նախատեսվող ձանապարհը կարող է բուռն զարգացում ապրող ասիական-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանը կապել Եվրոպայի հետ:

Մեր տարածաշրջանում համաշխարհային քաղաքականության երկու իրական ախտյանների՝ **Չինաստանի** ու **Միացյալ Նահանգների** խուլ դիմակայությունը տեղափոխվել է չինական «Մեկ գոտի, մեկ ձանապարհ»-ի երեք հիմնական ճյուղերի ու Հնդկաստանը Եվրոպայի հետ կապող ապագա միջանցքների բախման հարթություն, որովհետև հսկայի քայլերով զարգացող ասիական-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում Չինաստանին զսպելու խնդիրը զգուս է նաև իր տնտեսական բաղադրիչի կարիքը:

Հնդկաստան-Իրան-Հայաստան-Վրաստան-Եվրոպա միջանցքի ձևավորումը կանխելու նպատակն է թերևս դարձել անցած տարվա հոկտեմբերին Ղարաբաղյան պատերազմի դադարեցման մասին ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի իմպերատիվ որոշման վրա Ռուսաստանի խնդրանքով Չինաստանի դրած **տարօրինակ վետոյի** պատճառը: Հնդկաստանը Եվրոպայի հետ կապելու համար նախատեսվող այս միջանցքը կարելի է անվանել **արիական՝** նկատի ունենալով նրա հիմնական շահառուների հնդեվրոպական արմատները: Իրան հակադրվում են Ռուսաստանի ու Թուրքիայի **սիներջիի** գաղափարի վրա հիմնված Հայաստանի միջանցքայնացման **եվրասիական** (Թուրքիա-Ադրբեջան-Ռուսաստան) և **թուրանական** (Թուրքիա-Ադրբեջան-Կենտրոնական Ասիա) ծրագրերը, որոնց ելման դիրքի

նույնականությունն է հանդիսացել Ղարաբաղյան 44-օրյա պատերազմի **աշխարհաքաղաքական ենթահողը**: Բայց, 2020 թ. նոյեմբերի 9-ի հայտարարության 9-րդ կետով ստանալով տարածաշրջանի կոմունիկացիաների ապաշրջափակման պարտավորությունը, Անկարան ու Բաքուն այժմ փորձում են այն վաճառել Չինաստանին՝ արդեն որպես «Ջանգեղության միջանցքի» ծրագիր: Քանի որ Թուրքիան գտնվում է չինական «Մեկ գոտի, մեկ ճանապարհ»-ի միջին ուղու՝ Թուրքմենստան-Իրան գծի վրա, այժմ էլ Իգդիրից սկսվող ճանապարհների կառուցմամբ փորձում է չինացիներին զգուշորեն հրել դեպի հյուսիս՝ Նախիջևանով ու Ջանգեղուրով նախատեսվող թուրանական ուղին: Սակայն սկզբում Ռուսաստանի և ապա Իրանի հանդեպ գործի դրված այս կրկնակի խաբեությունը առայժմ չի արժանանում Չինաստանի հավանությանը, քանի որ Պեկինը զգուշանում է հակամարտությունների գոտիներից: Իսկ եվրասիական միջանցքի հանդեպ Ռուսաստանի շահագրգռությունն **առայժմ** խիստ համեստ է, քանի որ դրանով Մոսկվան փորձում է բացել Բաքու-Նախիջևան-Երևան երկաթգիծն իր Գյումրիի հենակետը ապաշրջափակելու համար: Հայաստանի միջանցքայնացման եվրասիական և թուրանական նախագծերի ընդհանուր տրամաբանությունն, այնուամենայնիվ, ենթադրում է Հայաստանի ազգային-պետական մարմնի անդամահատում նրան «հորիզոնական դիրքի» բերելու և Թուրքիա-Ադրբեջան-Ռուսաստան ու Թուրքիա-Ադրբեջան-Կենտրոնական Ասիա տնտեսաքաղաքական միջանցքներում «տեղավորելու» համար: Բայց, 2020 թ. նոյեմբերի 9-ի հայտարարության 9-րդ կետով ստանձնելով իր դաշնակցին վիրահատական սեղանին պառկեցնող «գլխավոր վիրաբույժի» պարտականությունը, Ռուսաստանի ներկա ղեկավարությունը ոչ թե նախատեսում է թուրանական նախագծի իրականացումը, այլ սկզբում՝ Հայաստանի սուվերենության վերացումը և ապա՝ Ղարաբաղի միջոցով Ադրբեջանի կլանումը:

Իսկ ահա Հնդկաստանին Եվրոպայի հետ կապող արիական նախագծի հիմքում ոչ միայն մեր երկրի տարածքային ամբողջականության պահպանման, այլև դիմադրողականության մեծացման նպատակադրումն է: Անշուշտ, Թուրքիայի հետ «կիսվելու» քաղաքականությունը Ռուսաստանին արդեն թույլ է տվել հաստատվել Լեռնային Ղարաբաղում ու սկսել Հայաստանի ինքնիշխանության կազմաքանդումը: Բայց Ղարաբաղյան երկրորդ պատերազմից հետո անցած մեկ տարվա ընթացքում Ֆրանսիայի նախագահի և ապա Միացյալ Նահանգների նոր վարչակազմի ջանքերով հաջողվել է խափանել Հայաստանի **դե-յուրե անդամահատման** ծրագիրը, ուստի այն վերածվել է ավելի նուրբ՝ **դե-ֆակտո անդամահատման** գործընթացի: Դա ենթադրում է Հայաստանի իշխանության քաղաքական կամքի տոտալ վերահսկողություն, մեր երկրի արևելյան մարզերի փաստացի ռազմակալում և ռուսական կապիտալի հայազգի ներկայացուցիչների «առատաձեռն» նվիրատվություններով քաղաքական այնպիսի նոր (հին) իրողությունների ստեղծում, որոնք հայ ժողովրդի համար «կցավազրկեն» իր հայրենիքի անդամահատումը:

Ակնհայտ է, որ Հայաստանի վրայով եվրասիական և թուրանական համատեղ միջանցքների ձևավորման անգամ ամենամեղմ տարբերակի

իրականացումը մեր երկիրը վերածելու է միայն դեպի Վրաստան անցք ունեցող պարկի, իսկ մեզ Հնդկաստան-Իրան-Եվրոպա երթուղու կապող օդակի վերածող արիական նախագիծը, ընդհակառակը, Հայաստանը դարձնելու է ոչ միայն արևմտյան ու իսլամական քաղաքակրթություններին, այլև Արևելքի (Հնդկաստան, Իրան) ու Արևմուտքի (Եվրոպա) լեզվակից արիացիներին կապող օդակը: Հնարավոր է համեմատել այս ամենը դարավոր հակառակորդի ու դիմագրկված դաշնակցի շահերի ժամանակավոր համադրության վրա հիմնված գույգ միջանցքների հետ...

Հայաստանի անձնատվության սպասումից շնագայլի ոգևորություն ապրող մեր դարավոր թշնամի թուրքը, Ադրբեջանի ձեռքով շրջափակելով մեր երկիրն արտաքին աշխարհի հետ կապող մայրուղիների խոցելի հատվածները (այսօր՝ Ռոտտանը, վաղը՝ Տիգրանաշենը, մյուս օրը՝ Ոսկեպարը) և Երևանից Վրաստան տանող հանգուցային ուղիների վրա տեղակայելով կասկածելի «ներդրողներ», մեր դեմ ուղղված նոր տիպի ցեղասպանական գործողություն՝ «**ճանապարհացիդ**» է սկսել: Թուրքերը հաշվարկել են Ռուսաստանում սկիզբ առած քաղաքակրթական խորքային գործընթացներին՝ իրենց համար կործանարար հետևանքները, ուստի նախքան Կրեմլում արևմտամետ տիրակալի **հայտնությունը** փորձում են օր առաջ դոմինանտ դիրքեր գրավել Հարավային Կովկասում ու Կենտրոնական Ասիայում: Նման պայմաններում մենք ուղղակի պարտավոր ենք մտածել ու գործել միայն ու միայն քաղաքակրթական չափորոշիչներով՝ օգտագործելով **և՛** Արևմուտքում, **և՛** ռուս հասարակայնության ներսում, **և՛** Իրանում Հայաստանի քաղաքակրթորեն նախընտրելի լինելու փաստը: Իսկ դրա համար նախ և առաջ հարկավոր է գիտակցել, որ Ռուսաստանում հոգեվարք ապրող հետխորհրդային համակարգի կողմից Հայաստանին պարտադրվող խորհրդային սահմանների լեգիտիմացումն իրականում Հայաստանի քաղաքակրթական ընտրությունը չեզոքացնելու փորձ է: Ուստի սեփական ձակատագրին տեր կանգնելու և մեր ազգային միասնությունը վերականգնելու միակ հնարավորությունը հայոց քաղաքակրթական ընտրության գաղափարի **քաղաքականացումն** է:

Հայաստանում պետք է սկսվի այնպիսի խորքային քաղաքական գործընթաց, որը **համազգային համախմբման մակարդակում** կլեգիտիմացնի մեր դարավոր քաղաքակրթական ընտրությունը և դրանով օրվա իշխանությանը կզրկի հայ ազգի անունից հանդես գալու լեգիտիմ իրավունքից, որով նա շատ է սիրում հպարտանալ: Իրականում հենց դրա վրա է կառուցված վերջին խորհրդարանական ընտրություններում Հայաստանի պարտված իշխանությունների տարած հաղթանակի առջև «կանաչ լույս» վառածների **կարճամիտ հաշվարկը**:

Երբ պարզ կդառնա, որ մեր «թագավորը» ոչ միայն մերկ է, այլև գուրկ է որևէ թուղթ ստորագրելու հնարավորությունից, նրա շղթայված ձեռքերով մեզ հապշտապ լուծումներ պարտադրող հետխորհրդային համակարգը ստիպված է լինելու մտածել ոչ թե Հայաստանի միջանցքայնացման, այլ իր գործընկերոջ վիճակում չհայտնվելու համար սեփական իշխանության փոխանցումն արագացնելու մասին:

Հայաստանում հատունացող **ազգային հեղափոխությունը** Ռուսաստանի մեռնող հետխորհրդային համակարգին թույլ չի տա ևս մեկ անգամ «փրկել» մեզ, բայց ահա մենք անպայման կփրկենք Ռուսաստանը՝ միութենական պետության փոխարեն նրան առաջարկելով անգլոսաքսերի կողմից անտերության մատնված մայրցամաքային Եվրոպայում արդեն շրջանառվող՝ ֆրանսիական Բրեստից մինչև ռուսական Վլադիվոստոկ ձգվող **քաղաքակրթական ընդհանուր տարածքի** գաղափարը:

Խմբ.

THE CONFRONTATION OF CIVILIZATIONAL CORRIDORS

Key words - civilizational face, "knight's move", anti-Chinese alliance, Aryan corridor, Eurasian project, "routecide", national unity, popular movement, civilizational choice.

Edit.

СТОЛКНОВЕНИЕ ЦИВИЛИЗАЦИОННЫХ КОРИДОРОВ

Ключевые слова - цивилизационный облик, «ход конем», антикитайский альянс, арийский коридор, евразийский проект, «путевой геноцид», национальное единство, народное движение, цивилизационный выбор.

Ред.